

ԲԱՆԱԿԱՐԱՎԱՐՈՒՄ

ՆԱՐԵԿԱՑԻՆ

ԵԿ

ՀԵՏԱԳԱՅ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նարեկացու ստեղծագործութեան ճիշդ արժէքաւորման ու տրավայիշանիրի պատուզութան խնդրում առանձնապէս աչքի են լընկում մեր պոէզիայի խոշորագոյն դէմքերը՝ թումաննեանը և խառակիանը։ Դրանք ամենից խորն են զգացել ու հասկացել նարեկացուն։ Դա նախ և առաջ երեսում է, ինչպէս սկզբում՝ ներածականում նշանած է, զանազան առիթներով նարեկացու մասին կրանց արտայայտած մի շարք մտքերից։

Թումաննեանն ինքը Մարդը (մարդը մեծատառվ) և մարդկայինը գործրած լինելով իր ստեղծագործութեան կիմեկան մոտիվներից մէկը, գեղարուեստական ստեղծագործութեան տեսութեան տեսութեան բնագամառնում էլ այն տեսակէտան է զարգացնում, որ իսկական գրականութիւնը մի անդիսի հայելի է, որը ոռչ միայն արտացորում է մամանակը և իր գէպֆերն ու գէմփերը. — Գրում է նա 1913 թուրին, — այլև տալիս է իր լոյսն ու զիրմութիւնը կեանքին, և զգում է կեանքում ստեղծել մարդու են վեհ ու վսիմ, չն մաքսւր ու անազարտ պատկիրը, որ տուել է նրան Աստուած, կազմուած ու հրաւուած բնութեան ամենամաքուր տարրերիցը^(*). Նոյն թօւականին գրած մի ուրիշ յօդուածում նա զրում է. «Կեանքն՝ իր ամրագութեան մէջ մեծ է, շատ մեծ ... կեանքը տիեզերական կեանքն է, և մարդու կեանքի ամրող զեհութիւնն ու քաղցրութիւնն էլ հէնց էն է», որ իր չըջապատի միջոցով ապրի էն մեծ կեանքավ»^(**). Այսպիսի գրական մարդը թումաննեանը հակադրում է քաղցրենիական նզնիմ անձնաւութիւններին, որոնք չեն կարող անում այդ կեանքով ապրել և իջնում են մինչև իրենց պատուիկ ես-ի սահմանները։

(*) Թումաննեանը Քննագատ, Երևան, 1939, էջ 244։

(**) Նոյն տեղը, էջ 238։

Իրեն՝ Թումաննեանի ողջ ստեղծագործութեան բովանդակութեան էտկան գծերից մէկը հէնց այդ պատուիկ ես-ի ժընաւում է և մեծ կեանքով ապրող մարդու ներքին կերպարի կերտումը։ Իսկ այդ դէպարում իրօք յուզիչ օրինակ կարող էր նրա համար հանդիսանալ ԱՄատեան Աղբերդութեան պոէմը, որի հեղինակը այնքան ոլքերգական ցնցումներ է տպրել՝ մարդկային պատուիկ ես-ի ժիաման և, ինչպէս Դեմիքնեանն է նիշը նչել, «ամիշ զերքը գառնալու» աստիճանին հասնելու ձգաման հանապարհն։

Թէ ինչ սոցիալական հիմք ունիր Թումաննեանի մօս ընծութեան ամենամաքուր տարրերիցց կազմուած ու հրաւուած մարդկային բնաւորութեան և հոգեկան աշխարհի կերտման իրէան և ինչ պատճառներով նա երգում էր պատուիկ ես-իցն գուրա գալու ու տիեզերքի հետ ձուլուելու մասիցը, զրանք, ի հարկէ, յատուկ քննութեան և պարզաբանման թեմաներ են, սակայն մի քան պարզ է, որ գրանք միանգամացն նոր հասարակական պայմանների արդիւնք են և այդ իմաստավ ոչ մի կապ ունեն նաւրիկացու հետ։ Բայց զրանով հանդիբը, եթէ խօսքը գերաբերում է բնութեան ամենամաքուր տարրերից հրաւուած մարդուն և տիեզերքին միանալով նրա հետ անմահանաւան տինչացող մարդուն, բնականարար թումաննեանը չէր կարող աչքի առաջ չունենալ նարեկացուն։

Այս իմաստով հարցի զրայ կարող է լոյս սփուել Արագիսանի ծննդեան 150-ամեակի կապակցութեամբ՝ Աւետիք Խոսհակեանի գրած «Անոհ Արովիսանի արծանի մօս» խօսքի հետեւալ կատուածը. «Չորս գիրք ունի Հայ ժողովուրդը, որ ինչպէս չորս բարձր սփուներ, կիել են Հայ ժողովուրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լաւագոյն ապագայի տեխնալքները, նրա իդէալները։ Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը, Եղիշէի Վարդանանց Պատերազմը, նարեկացու Արագիս անսահմանութեան և յաւերժութեան հետ և Արագեանի Վէրքը»^(*)։

Ինչպէս տեսնում ենք, մեծ բանաս-

(*) Առվետական արտեստ, Խօն, 1955 թ., էջ 5։

տեղծը ճիշգ բացայայտելով՝ նարեկացու լրատեանի էռութիւնը համարում է խօսքը անսահմանութեան և յաւերժութեան հետ» և իթէ նա այդ գիրքը զնում է Խորինացու, Եղիշէի և Արովեանի գործերի հողաքին, ապա գա նշանակում է, թէ նա նարեկացու երգած յաւերժութեան հասնելու մոտիվի մէջ ժողովրդաբական ու հայրենասիրական իմաստ է ահսնում:

Յայսնի է, որ թէ՛ Թումանեանի և թէ՛ Խաչակիսեանի ստեղծագործութեան մէջ յանախի և հանդիպում այնպիսի գործեր, որոնց մէջ խօսում է տիեզերքին, բնութեանը միանալով՝ անսահմանութեան հասնելու, յաւերժանալու մասին: Նրանք այդպիսով, իսկապէս արտայայտել են ժողովրդի հետ հոգեպէս ձուլուելու և ժողովրդի յաւերժութեան զաղափարը:

Թումանեանի ստեղծագործութեան մէջ այս մոտիվի արտայայտութեան լաւագոյն փաստերը նրա իմաստութեամբ լիցուն քառեաներն են: Թումանեանը, մանաւանդ իր կեանքի վերջին տարիների գրած քառեաներում, մեծագոյն սիրով փառում է այնպիսի խոների, որոնք նրան քարձացնում են մինչև իր ասած տիեզերական կեանքի ըմբռնումը: Անս նա իրեն յօշգող հարցերի շուրջը խօսք է բացել երկնաւէտ Մասիսի հետ:

Բաւձր է նրնոց աւխարհն հայոց ու Մասիսը երկնաւէտ.

Իմ խոր հոգին են բարձունելին խօսք բացել երա հետ, Անհաս բանից, բակրագանցից, երբ չկան ել դեռ չկար, Մինչեւ վախնանն անվախնանի ընթառում է զարդիկար:

Սյուբան խորքերը ձգտող տիեզերական առեղծուածները քննութեան առնող բանաստեղծը հոգով վերանում ու վեհանում է, զրովեան նա ընդունակ է լսելու տիեզերքի մրմունջն ու մեղեղին.

Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին:

(*) Հ. Թումանեան, Քառեակներ, Երևան, 1938, էջ 50:

Տիեզերքի խոր մելիթին ու մըրմունջը ամենուր (*):

Այս գէպքում, նա արդէն կարող էր իրեն ազատուած համարել հոգուն խեղճուկ տանջանքներ պատճառող անձուկ հսից և ձգտիլ հասնելու ամենաբարձր ու ամենամեծ հաճոյք պատճառող զգացմունքին իրեն իրեն այլևս չզգալու, ամէնքի հետ լինելու դրութեանը:

Բայց ով կրտայ են վայելքը՝ ինք ինձ ել շրջալիք, ու հալուեի, ծաւալուեի, ամէնքի հետ լինելի ... (**):

Եւ նա հասնում է գրան: Բանասահղի համար գալիս է այն վայրկեանը, երբ նա քառեակներից մէկում իրեն համարում է տիեզերքի տէրը: Այդ վայրկեանը բերկրալից է ու երանակէտ, և նա համակում է մի պայծառ լաւատահուութեամբ ու վերջնական նպատակին հասնելու հաւատով, որովհետեւ նա, միտամանակ, յաղթահարում է իր մէջ, ինչպէս Խահակնեանը կ'ասէ՛ յաւերժական կսկիծը բոլոր գոյութիւններին, այսինքն մահուան անխուսափելիութիւնից աաջացած ողբերգութիւնը: Բանաստեղծի հոգին ամրանում է ողջ տիեզերքը պատելով, և նա համոզեցուցիլ հանգստութեամբ վերջնականապէս յանցում է մահուան ժխտման գաղափարին:

Հազար տարով, հազար դարով առաջ բէ ես, ի՞նչ կայ որ, սս եկել եմ, կամ, կը լինեմ յառ ու յաւէտ, ի՞նչ կայ որ. Հազար եսպէս ձեւեր փոխեմ, ձեր խազ է անցաւոր, սս միտ հոգի, տիեզերքի մեծ հոգը նետ, ի՞նչ կայ որ (**):

Զգէտք է կարծել, որ Թումանեանն իր ստեղծագործութեան վերջին շրջանումն է միայն այսպիսի մոտիվներ երգել (օրինակ՝ նաև նրա ԱՄիրիուսի հրաժեշտը, ԱՄիրեղերքի ընթերցումը), ու Արուսւեան:

(*) Հ. Թումանեան, Քառեակներ, Երևան, 1938, էջ 44:

(**) Նոյն աեղը, էջ 41:

(***) Նոյն աեղը, էջ 47:

բանաստեղծութիւնները). Նա նոյն այդ վերոյիշեալ խոնկրը արտայայտել է նաև իր ստեղծագործութեան սկզբանական չքջանի գործերում: Բնորոշ օրինակ է «Դէպի անհունը պոէմը»:

Թումանիանը նոյնապէս ուշի ուշով ուշ սումասիրել է Նարեկացու պոէտիկական կուլտուրան և նրանից ստեղծագործքն օգտագործել է շատ բան: Այսահեղ առաւելապէս ուշագրութեան արժանի է այն փասովը, որ Թումանիանը իր լաւագոյն պոէմերից մի քանիսը հիմնականում զրել է առաջին անգամ Նարեկում գործածուած տառը վանկանի յամբ-անապեստեան երկանդամ սոտանաւորի չափով: Բնաւ պատհական չէ, որ հիմնականում այդ չափով գրուած պոէմերի թւում են օթմակարգոցի առումը, «Դէպի անհունը» և անհուչը: Ըստ երեսյթին, այդ պոէմերի ուժեղ բախումներով հարուստ բովանդակութիւնն է, որ նրանց բանաստեղծին մղել է գէպի նոյն չափի գործածութիւնը: Որքան գեղեցիկ ու հարուցած են հնչում, օրինակ՝ «Անուշը»ի այդ չափով գրուած հատուածները:

Կանչում է կրկին /, կանչում անդադար կենաղ երկրի / կարօսը անեուն, ...^(*)

Շատ լաւ է ստացուել բանաստեղծի լիրիկական շեղումը, նոյնքան լաւ և գեղեցիկ են ստացուել նաև էպիկական նկարագրութիւնները.

Խնչպէս մի հեղեղ / վեր կենար յանձնարձ, Երկրների մըրեած / ամպերի իջներ, Խնչպէս փորորդիկ սաստիկ սրբնաց, Գիւղից սլացան մի խումբ կտրիներ^(**):

Արդէն խօսք չի կարող լինել նոյն չափով գրուած այն տողերի գեղեցկութեան մասին, երբ դիալոգներով հերոսների ապարութիւնն են արտայայտուած: Այսպիսով, կարելի է ասել, Թումանիանը գերազանցել է Նարեկացու երկանգամ տառը վահկանի յամբ-անապեստեան սոտանաւորի բազ-

մադէպ կիրառութեամբ և նրա ստեղծագործութեան փորձը ցոյց է տալիս, որ նարեկացու ստեղծագործի այդ չափը միւս տիսակի ստանաւորի չափերի հետ համեմատած ամենից լնդհանրականն է և ամենից ճկունը՝ տարբեր բովանդակութիւնների նոյն յաջորդութեամբ արտայայտելու արժանիքների տեսակէտից: Եւ բնաւ պատահական չէ, որ մեր քնարերգուներից շատերը իրենց լաւագոյն պոէմների և բառաստեղծութիւնների մի հշանակալից մասով գրել են այդ չափով (օրինակ՝ Ալիշանն իր «Պլառուն Աւարայրին», Յազհաննիսեանն իր «Ժայռը», Տէրեանն իր «Վերագրած» և այլն):

Խոսհակեանն իր ստեղծագործութեան շատ մոտիվներով հոգեկից է հանդիսանում Թումանեանին: Եւ այն ինչ ասուեց Թումանեանի և Նարեկացու ստեղծագործութեան մի քանի կողմերի փոխյարաբերութեան մասին, գերաբերում է նաև խոսհակեանին:

Նախ՝ պէտք է ասել, որ Խոսհակեանի ստեղծագործութեան մէջ մեծ տեղ է բըռնում՝ աշխարհի գեղեցկութեան պաշտամունքը: Այսո, հրաշք է աշխարհը, հէքեաթ է գեղեցիկ և անհուն զարմանալիք^(*), բացագանչում է նրա լիրիկական պատմուածքներից մէկի՝ «Ալապիի վերջին գարունի հերոսը»:

Այս պաշտամունքից բխում է բառաստեղծի ապրած խորը և ուժեղ ներքին գրաման: Ճիշգ է, աշխարհը մի զարմանալի հրաշք է ու գեղեցիկ հէքեաթ, բայց ի՞նչ է այդ աշխարհում ապրող մարդու կեանքի տեսողութիւնը: Խորը ծերութեան հասած Խոսպին Խոսհակեանի պատմուածքում առում է: «— Աւազ, անցաւ հարիւր տարիս մի գիշերուայ երազի պէս ...»^(**): Ահա թէ ինչն է ողբերգականը. Խոսհակեանի թափառական Շիգնարը քայլում է և իր հոգու խորքում գառնագին միտք անում մարդու գոյութիւնը մի ակնեարթ լինելու վրայ. Խոկ թռչուն դարձած Բուդղան այսպէս է խորհրդածում աշխարհի

(*) Հ: Թումանեան, Գեղարուեստական Երեկ, Երեան, 1934, էջ 20:

(**) Նոյն տեղը, էջ 27:

(*) Ա. Խոսհակեան, Ըստիր Երեկը, Երեւան, 1939, է. 2, էջ 289:

(**) Նոյն տեղը:

ու մարդու մասին. «Տեսայ՝ աշխարհը այնքան մեծ, և զգացող արարածը այնքան փոքր, բայց նրա տանջանքն ու տենչանքը աշխարհից մեծ է»։ Աւրեմն բաւական չէ, որ մարդու կեանքը երազի նման վաղանցուկ է և մի ակնթարթ յաւերժութեան դէմ, այդ ակնթարթն էլ բիրկրաւից չի անցնում։

Խօսակեանը հառականում է, որ մարդու տանջանքները ունեն առաւելապէս սոցիոլական պատճառներ և նա որպէս մարդու երջանկութեան ջերմ նախանձախնդիր, ամէն անգամ խիստ ցասումով է լցում, երբ խօսում է այդ պատճառների մասին, երբ խօսում է անցեալի շահագործման վրայ հիմուած հասարակական կեանքի մասին, մի կեանքի, ուր մարդիկ սիրար կոկորդից պատաս են հանում» և դարձնում են հեքեաթ աշխարհը մի սահաւար ջեհնէմ։

Խօսակեանի պոէզիայում տեղ բռնող աշխարհի՝ տիեզերքի գեղեցկութեան ու մեծութեան և մարդու կեանքի կարձատեւութեան հակասութիւնից առաջացած ծանր ապրումը, որը չփառն կէտեր ունի Մատեանում արտայայտուած Աստծու յաւերժութեան և մարդու վախճանականութեան հակասութիւնից ծնուած սպրեգութեան հետ, յաղթահարում է բնութեանը տիեզերքին միանալով անմահանալու տենչանքով։ Այդ մասիվը խօսակեանն արտայայտել է սուլծազործ ական առաջին խնկ տարիներից սկսած։ Նրա սկզբնական գործերից մէկն է օջիկերական զանգաբանասեղծութիւնը։ Այստեղ կեղինակն առում է, մէ ինքը զգում և տեսնում է ողջ տիեզերքը և որ տիեզերքը մի անհուն զանգ է, իսկ իր հոգին նրա վսեմ լիզուակը։ Տիեզերք-զանգը զի՞ լուսթեան մէջ զօղանջում է անհունութեան, յաւերժութեան, ճշմարտութեան և գեղեցկութեան երգը։

Բուրժուական իրականութիւնից խիստ գժգուհ բանաստեղծը այդ երգի — իր սգու երգի թէերով վերանում և սաւառնում է, ինչպէս մի այլ բանաստեղծութեան մէջ է առում, տիեզերական խորութիւնների անճառ վայրերում։

(*) Ա. Խօսակեան, Բնտիք Երկեր, Երևան, 1939, հ. 2, էջ 312։

Երկինքն նիստանչ, օֆել, լուսալից, Հոգիս արթացուց լուուրեան երգով։ Եւ այս անցուկից, կեանքի անձուկից Թափ առաւ հողիս երազ-թիւերով։ Եւ տիեզերական խորութիւնների Աննու վայրերում հոգիս սաւառնեց։ Եւ խորախորուրդ, վեհ զալցնիների Անխօս բարբառի լուռ ունկնդրեց(*)։

Տիեզերական խորախորուրդ զի՞ զալցնիքների բարբառին ունկնդրելով՝ բանատեղձի հոգին հաղորդում է յաւիտենական նութեան խոնքներին և ծուլում է տիեզերի անմահ էռթեան հետո։

Եւ Երկիւլապին հոգիս հաղորդուեց Բաւիտենուրեան խոնքերին վսին, Աննոն եռթեան հալոււց ու ծուլուց, ինչպէս մի ննչիւն, հիւլ մի ննիս...(*)

Ինչ զիերաբերում է Նարեկացու գոէտ արկական կուլտուրայի ուսումնասիրման և օգտագործման, ապա պէտք է ասել, որ խօսակեանն էլ մեծ ուշագրութիւնն է զարձրել այդ բանի վրայ։ Հետաքրքրական փաստերից մէկն այն է, որ նա իր նշանաւոր պոէմը՝ «Արու-Լալա-Մահարին» զիի է, գարձնալ առաջին անգամ նարիկում գործածուած, յամբանապիստեան քսուան գանկանի ոտանաւորի շափական չափը մեր միւս բանաստեղծները չեն գործածել։ Այնունեկան իստահակեանը յատկապէս պոէմերում և արձակ էջերում (սրոնցից մեծ մասը փաստարէն արձակ պոէմեր են) ճիշջ մօտեցմամբ՝ ստեղծագործութիւնների ու սեղանական հերթականութիւնների ամենալավագութիւնը, վայլան երանգաւորութիւնը։

Մեր նոր գրականութեան իննեարիւրական թուականների չըջանի խոչորագոյն բանաստեղծների՝ թուամանեանի, իսահակեանի, Տէրեանի, Մեծ արենցի ու Վարու-

(*) Ա. Խօսակեան, Բնտիք Երկեր, հ. 1, Երևան, 1939, էջ 281։

(**) Նայն տեղը, էջ 181։

ժանի նման գեղարուեստական խօսքի մեծ վարպետների՝ Նարեկացու ժառանգութեան օգտագործման այս բոլոր փաստերը (սրբացով գեղ բնաւ չի սպառում իրողաւթիւնը), բերում են այն եղակացութեան, որ Հայ գրականութեան վերածնութեան մեծ սկզբանաւորողի գրական կուլտուրան իր որոշ կողմերով՝ առանձնապէս նրա անչափ հարուստ և նոխ բառապաշարը, տաղաչափական և պատկերաւորման բարձր արուեստը, այժմ էլ, մեր օրերում էլ, կարող է ուսումնամիրութեան ու քննադատաբար օգտագործման ալբիւր հանդիսանալ:

Ինչ վերաբերում է մասնաւորապէս Նարեկացու գործերի բառապաշարի օգտագործման հնարաւորութեան խնդրին, պէտք է ասել հետեւալը: Իր տեղում նշուել է Թին, որ Նարեկացին բազմաթիւ բառեր (մօտ երկու հազար) կամ առաջին անգամ գրականութեան մէջ ինքն է գործածել կամ ինքն է ստեղծել: Այդ բառերից մի մասը վաղուց ընդհանուր գործածութեան է անցել, ինչպէս օրինակ՝ բողբոջախիտ, մշտափայլ, ծիծաղախիտ, վայելչագեղ, պտղաւէտ, ակներե, խուռներամ և այլն: Բացառուած չէ, որ Նարեկացու ստեղծած ուրիշ շատ բառեր ճաշակաւոր, նրբանկատ և զգուշաւոր մօտեցմամբ՝ ամէն կերպ խուսափելով արխարիկ մոլու տարուելու արտաւոր հակումից, մեր գրողները օգտագործեն լեզուն հարստացնելու նպաստակով: Յիշատակենք այդպիսի մի քանի բառեր ոչ թէ անպայման յանձնարարելու իմաստով, այլ նմոյշի համար: Օրինակ՝ արփիանանչ, ակնապարար, գեղածիծած, անձնադատ, ահեղաշուք, գեղատիւնուր, ծիրանածաւալ, ծիրանածաւէն, նոճիաճան, բուրազուարթ, իրաւամերժ, անձեռանսւնդ, խւարասնունդ, գարնանազայր, ահազնատեսիլ, անճողոպրելի, կարօտաճեմ, ահազնատիպ, անբարիխօս, մշտաչարչար, մշտատատան, սիրասնունդ, բիւրակործման, մշտասառոյց բազմահատուած, բիւրամանեայ, սիրաշարժ, լիսնակարկառ, լեսնահորով, կարծրախարիսխ, ընդարձակապարբ, վայելչատերե, սիրաբորզօջ, գեղեցիկագեղ, պատշաճակերտ, գեղասազարթ, արջնաթոյր, անձրեածիր, արփիարկերպ, արփիարկերպ, արփիացնցուզ և այլն:

Հասկանալի է, որ տուեալ բառը բանաստեղծութեան մէջ գործածելու դէպքում, պէտք է այն բնականօրէն հիւսուի հեղինակի ոճին և չնկատուի, թէ այն հնից է վիցուած: Հին բառի այդպիսի օգտագործման մի սքանչելի նմոյշ է տուել թուամանեանը իր աԱղթամարը լեզնգում: Երբ նա այդ լեզենցի առաջին տողը սկսում է Նարեկացուց վիցրած ծիծաղախիս բառով (սՄիծաղախիտ Վանայ ծովի . . .), բնաւ չի զգացուում, թէ դա հնում ստեղծուած և այնուհետև շատ քիչ գործածուած մի բառ է:

Ոլգետահայ նշանաւոր գրողներից շատերը, մանաւանդ Զարենցը և Դեմիրճեանը, ուշի ուշով ուսումնասիրել են Նարեկացու ժառանգութիւնը, որի գրական հետեւանքները կարելի է տեսնել նրանց ստեղծագործութիւններում:

Հայ կին գրականութիւնը համաշխարհային հետաքրքրութիւն և նշանակութիւն ունի. Նրա պատմութիւնը հարուստ է բազմաթիւ պայծառ էջերով: Հայ իրականութեան մէջ՝ ֆէոդալականութեան դէմմզուող գասակարգային սուր պայքարի պայմաններում, առաջ են եկել պրոգրեսիվ շատ գաղափարներ:

Հայաստանը եղել է կուլտուրայի ամենավազ օրրաններից մէկը աշխարհում: Այնտեղից միջնադարեան ֆէոդալական խաւարի դէմ արձակուել են լոյսի ուժգին ճառագայքիներ:

Հայ ժողովրդից ծնուեց միջնադարի ժամանակաշրջանի մեծագոյն քննարերգութանատեղծը՝ Դիրքոր Նարեկացին: Ինչպէս հանձարեղ գրողներից շատերն են գիտակցել, որ իրենց ստեղծագործութեամբ անձնանում են, այնպէս էլ Նարեկացին է երաշալի պատկերացրել այդ, երբ գրել է իր ռԱղբերգութեան Մատեանուում:

Եւ բեկու վախճան ընկալայց իբր զմահացու, Այլ յարակցութեամբ բանի այս սովերի գրեցայց կենդանի:

(Վերջ՝ 19)

Մ. ՄԿՐԵԱՆ